



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2011 թվականի N 111-Ա

ք. Հրազդան

ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. դեկտեմբերի 23-ի N 1854-Ն որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի 13-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2011թ. փետրվարի 15-ի N 49-Ա որոշումը և զբաղվածության աջակցության Կոտայքի մարզային հանձնաժողովի 2011թ. մարտի 9-ի N 1 նիստի զեկուցագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի կողմից հավանության արժանացած վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

2. Նոր Արտամետ համայնքի <Համայնքի վարչական տարածքում գտնվող ճանապարհների, մայրերի, գերեզմանատան պարսպապատման և սանիտարական մաքրման աշխատանքներ> և Արզական համայնքի <Համայնքի փողոցների, ճանապարհների սանիտարական մաքրման, հուշարձանի կանաչապատման և ծառատնկման օժանդակ աշխատանքներ> ծրագրերը համարել չեղյալ սահմանված ժամկետում չներկայացնելու և ծրագրերին համապատասխան աշխատուժով չապահովելու պատճառով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ԿՇԱՀԳԱԼԴՅԱՆ





Հավելված

ՀՀ Կոնաքի մարզպետի

2011թվականի մարտի 25-ի N 111-Ա որոշման

**ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ**

Ծրագրի պատվիրատուն	Ծրագրի անվանումը	Նախատեսվող ֆինանսական միջոցների չափը /դրամ/	Մասնակիցների քանակը	Ծրագրի սկիզբ և ավարտ
ք. Հրազդան	Համայնքի Ա-1, Ա-2, Ա-4, Ա-6, Մաքրավան թաղամասերի ճանապարհների, մայթերի և նրանց հարող կանաչապատ տարածքների սանիտարական մաքրում և նորոգման օժանդակ աշխատանքներ	3 000 000	14	2011թ. ապրիլի 1 2011թ. հունիսի 30
ք. Աբովյան	Փողոցների և բակերի նորոգման, կանաչ գոտիների խնամքի, ծառերի ճյուղերի էտման և սանիտարական մաքրման աշխատանքներ	1 400 000	9	2011թ. ապրիլի 1 2011թ. մայիսի 31
ք. Չարենցավան	Համայնքի 1Ա, 1, 2 և 4-րդ թաղամասերի ներթաղամասային ճանապարհների, բակերի և կանաչապատ տարածքների կառուցապատման և սանիտարական մաքրման աշխատանքներ:	1 300 000	6	2011թ. ապրիլի 1 2011թ. հունիսի 30
ք. Եղվարդ	Ոռոգման ցանցերի մասնակի նորոգման օժանդակ աշխատանքներ	1 000 000	14	2011թ. ապրիլի 1 2011թ. ապրիլի 31
Զրաբեր	Համայնքի փողոցների, ճանապարհների սանիտարական մաքրման աշխատանքներ, հուշարձանի և կանաչապատման, ծառատնկման օժանդակ աշխատանքներ	1 500 000	7	2011թ. ապրիլի 1 2011թ. հունիսի 30
Արգել	Համայնքի ճանապարհների, մայթերի սանիտարական մաքրման աշխատանքներ և նրանց հարող տարածքների ու սելաֆատարի մասնակի նորոգման օժանդակ աշխատանքներ	2 000 000	9	2011թ. ապրիլի 1 2011թ. հունիսի 30
Կամարիս	Համայնքի հուշարձանների տարածքների նորոգման և կանաչապատման, ճանապարհամերձ առուների և նրանց հարող տարածքների սանիտարական մաքրման աշխատանքներ	1 500 000	7	2011թ. ապրիլի 1 2011թ. հունիսի 30
Ակունք	Համայնքային նշանակության ճանապարհների, ճանապարհամերձ առուների և նրանց հարող տարածքների նորոգման և սանիտարական մաքրման	2 500 000	12	2011թ. ապրիլի 1 2011թ. հունիսի 30



Նոր Երզնկա	Համայնքի ճանապարհների և նրանց հարող տարածքների, մայթերի սանիտարական մաքրման աշխատանքներ, ջրմուղ-կոյուղու ցանցի մասնակի վերանորոգման և խցանումների մաքրման օժանդակ աշխատանքներ	2 000 000	9	2011թ. ապրիլի 1 2011թ. հունիսի 30
Քասախ	Համայնքի ճանապարհների և նրանց հարող տարածքների, մայթերի սանիտարական մաքրման աշխատանքներ, ջրմուղ-կոյուղու ցանցի խցանումների մաքրման օժանդակ աշխատանքներ	2 000 000	9	2011թ. ապրիլի 1 2011թ. հունիսի 30

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի

ատոլջապահության և սոցիալական ապահովության

վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ



Վ.Հունանյան